**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2020 թվականի մայիսի 22-ին կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 պայմանագրում 2021 թվականի մայիսի 19-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ | Կատարողի առաջարկության և պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված եզրակացության հիման վրա աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում: |
| Փոփոխության նկարագրություն<br><br>: | ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետի երկարաձգում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 7.5 և 7.6 կետեր: |

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
22.05.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 գնման պայմանագրի

ք. Երևան «19» մայիսի 2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Ազիզյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 22.05.2020թ. կնքված ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝

ա) Պայմանագրի N 1 հավելվածում աշխատանքների կատարման ժամկետին վերաբերող <<91>> թիվը փոխարինել <<121>> թվով:

բ) Պայմանագրի N 1.1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելվածը բաղկացած է երկու էջից և համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՏԱՐՈՂ՝ |
|---|---|
| ՀՀ քաղաքաշինության կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ<br>կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության<br>աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011033868, ՀՎՀՀ 02565827 | <<Հայնախագիծ>> ԲԲԸ<br>ք. Երևան, Չարենցի 1<br><<Արդշինբանկ>> ՓԲԸ<br>Հ/Հ 2470100038500000<br>ՀՎՀՀ 01503291 |
| Գլխավոր քարտուղար՝<br>_______ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | Տնօրեն՝<br>_______ Գ. Ազիզյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |

Հավելված
22.05.2020թ. կնքված N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 պայմանագրի
«19» մայիսի 2021թ. կնքված N 2 համաձայնագրի
<<Հավելված N 1.1
22.05.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ՄԱԽԾՁԲ-20/2 պայմանագրի

# Օրացուցային գրաֆիկ

## ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի (Նաիրի) բժշկական կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների

| Հ.հ | ՆՆՓ մշակման աշխատանքի գործընթացները և փուլերը | Շաբաթների քանակը (ընդամենը 121 օրացուցային օր) | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17+2 օր |
| 1 | Ելակետային նյութերի հավաքագրում | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | Հողատարածքների գեոդեզիական աշխատանքների իրականացում և հանույթների պատրաստում | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | Նախագծման առաջադրանքի հիման վրա շենքերի ծավալահատակագծային մանրամասն լուծումների (իրականացում և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | |
| 4 | Համաձայնեցված հատակագծային լուծումների հիման վրա ՃՀԱ ստանալու դիմումի համար անհրաժեշտ ԷՍՔԻԶԱՅԻՆ առաջարկի նյութերի լրակազմի պատրաստում՝ ներառյալ էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, գազամատակարարման, հրդեհաշիջման և կոյուղու հաշվարկային հզորությունների տրամադրում | | | | | | | | | | | | | | | | | |
| 5 | Անհրաժեշտության դեպքում ստացված ՃՀԱ-ին ճարտարապետաշինարարական լուծումների համապատասխանեցում | | | | | | | | | | | | | | | | | |
| 6 | Ներքին ինժեներական ենթակառուցվածքների նախագծային լուծումների մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | |
| 7 | Արտաքին ինժեներական ենթակառուցվածքների մշակում ստացված տեխնիկական պայմանների հիման վրա և համաձայնեցում պատվիրատուի հետ | | | | | | | | | | | | | | | | | |
| 8 | Աշխատանքային նախագծի լրակազմի մշակում և համաձայնեցում պատվիրատուի հետ՝ ներառյալ շինարարության կազմակերպման նախագիծը | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 9 | Նախագծի լրակազմի քաղաքաշինական պարզ փորձաքննության իրականացում և դրական եզրակացության ստացում | | | | | | | | | | | | | | | | | |
| 10 | Մշակված նախագծի հիման վրա նախահաշվի կազմում | | | | | | | | | | | | | | | | | |
| 11 | Համաձայնեցում շահագրգիռ մարմինների հետ և անհրաժեշտ եզրակացությունների ստացում | | | | | | | | | | | | | | | | | |

>>:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011033868, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_________________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ՝**
<<Հայնախագիծ>> ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1
<<Արդշինբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 2470100038500000
ՀՎՀՀ 01503291

Տնօրեն՝

_________________ Գ. Ազիզյան
(ստորագրություն)

Կ.Տ.